№ 219 ԿԻՐԱԿԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

ԿԻՐԱԿԻ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8 № 219

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և ազգ օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Մարիամ Գասպարեան Մելիք-Մկրտչեանց Եղիսաբէթ և Ալէքսի Խօջամեանցները, ցաւօք սրտի յայտնում են իրանց բարեկամներին և յարգողներին առաջին ամուսին, երկրորդ և երրորդի փեսայ Դաշնակցութեան յայտնի զինուոր՝

ՇԻԱԼԻ-ՍՏԵՓԱՆ ՄԵԼԻՔ-ՄԿՐՏՉԵԱՆՑԻ

անապատի մահվան մասին, որը տեղի ունեցաւ ամսոյս 5-ին։ Հոգեհանգիստը ամսոյս 7-ին, երեկոյեան 5 ժամին, Թանդոյեան ս. Աստուածածին եկեղեցում, Միքայէլեան փողոց։ Թաղումը հետևեալ օրը. պատարագի սկիզբն է 10.½ ժամին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատան։ (2. կ.) 2—2

Թեմիս սրբազան առաջնորդի կարգադրութեամբ այսօր, կիրակի, ս. պատարագից յետոյ 12 ժամին կը կատարվի Թիֆլիսի հայոց Վանքի աւագ եկեղեցում հոգեհանգիստ հանդուցեալ

ՆԱՀԱՊԵՏ ԵՊ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆԻ

մահվան առիթով, որ տեղի է ունեցել Նոր-Նախիջևանում հոկտեմբերի 1-ին։ 1—1

Հոկտեմբերի 4-ին, Խարկովում, կարճատև և ծանր հիւանդութիւնից յետոյ վախճանվել է

ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԳՐԻԳՈՐԵԱՆԸ

որի մասին ցաւօք սրտի յայտնում են ազգականներին, ծանօթներին և պաշտօնակիցներին հանդուցեալի այրին, որդիքը և քոյրը. կատարիւէ Վասկրեսենսկին։ Հանդուցեալի մարմինը կը բերվի երկաթուղու կայարանը երկուշաբթի, առաւօտեան 7 ժամին։ Հոգեհանգստի և թաղման մասին կը լինի առանձին յայտարարութիւն։

ԱՐՏԻՍՏԻԿ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ

ՀԱՅ ԴՐԱՄԱՏԻԿ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ

ՕՐ. ԷՐԹԵԱՆԻ

առաջին բեմ-ելի համար

ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԻ

ՏԱՍՆ ԵՒ ԵՕԹ ՏԱՐԵԿԱՆՆԵՐ

Պիես 4 արար.. Դրէյէրի, թարգ. Տէր-Միրաքեանի

ՎԵՐՋԸ

ԹԱՆԿԱԳԻՆ ՀԱՄԲՈՅՐ

Վաղվվի 1 արար., Զինարովի, թարգմանութիւն Արաքսեանի

Սկիզբն է երեկոյեան ժամը հիսս 8-ին

Տեղերի գները անցեալ տարվանն են։

Վարչութեան հերթապահ անդամ պ. Կարա-Մուրզա

2—2 առ. Բէժիսսեօր՝ Յ. Ա Բ Ի Լ Ե Ա Ն

ԿՈՂԲԻ ԱՂԱՀԱՆՔԻ ԿԱՊԱԼԱՌՈՒ

ՋԱՔԱՐ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՋԱՆՓՈԼԱԴԵԱՆԻ ԺԱՌԱՆԳՆԵՐԸ

յայտարարում են ի գիտութիւն

ԱՂ ԳՆՈՂՆԵՐԻՆ,

որ ժամանակաւոր, ցնոր կարգադրութիւն, աղի պատէրները ընդունվում են Կողբում։ Նամակները և դրամը պէտք է ղրկել այս հասցէով՝ Сел. Кульпѣ, Беминэ Захарьевнѣ Джанполадовой. 3-ին. 5-ին և 8-ին 3—3

Բ Ա Ի Շ Կ

Մ. ՄՈՎՍԻՍԵԱՆ

Ներքին ու երեխայոց հիւանդութիւնների Ընդունում է առաւ. 9—11 ժ. երկ. 5—7 ժ., Ելիզավետինսկայա փողոց տուն № 21.

առ. (ա. օ.) 8—10

ԿԱՆԱՆՑ ԿԻՆԻԿԱՅԻ

պրոֆ. Սենգիրեվի նախկին օրդինատոր

Բ Ա Ի Շ Կ

Դ. Ն. ԱԹԱԲԷԳԵԱՆ

Ընդունում է կանայք և մանկաբարձական հիւանդութիւն ունեցողներին Մոսկվայում։ Խորհրդակցութիւնը պրոֆէսորների մասնակցութեամբ։ Հասցէն՝ Тверская, Козицкій пер., д. Бахрушина, кв. 230.

առ. 10—10

Ց Ա Ց Տ Ա Ր Ա Բ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Հոկտեմբերի 8-ին, Գայանեան դպրոցի դահլիճում, (Պասկեվիչ փող. № 13) առաւօտեան ժամը 11 ին, կայանալու է Հայուհեաց Որբանոցի ընկերութեան առաջին ընդհանուր ժողովը։

Ընդհանուր ժողովի զբաղմունքները լինելու են։

1) Հաշուետուութիւն ընկերութեան հիմնադիր անդամներին կողմից։

2) Ընտրութիւններ, ընկերութեան ամբողջ վարչական կազմի, ըստ կանոնադրութեան §§ 21, 41, 42 և 43-ի։

3) Կը քննվին և մի քանի ընթացիկ հարցեր ընկերութեան վերաբերեալ։

Եթէ անդամների որոշ թիւը ներկայ չը գտնվի, ժողովը կը յետաձգվի և կը կայանայ հետևեալ կիրակի, հոկտեմբերի 15-ին։

(հ. 2. կ.) առ. 3—3

Ա. ՄԵԼԻՔ-ԱԼԱՎԵՐԴԵԱՆ

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ և ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ

առարկաների դասեր։

առ. Межевая, 2. 17—20

Մեկնելու պատճառով

արժան վաճառվում է մի

ԱՄԱՐԱՆՈՑ,

որ գտնվում է Եալտայում, հայկական նոր կառուցված եկեղեցուն կից և որը բաղկացած է 30 սենեակներից բոլոր յարմարութիւններով—հովասուն այգի, վանում, ջուր, ջրանցք և այլն։

Պայմանների մասին դիմել տերոջը—Պետերբուրգ, Капилети, Садовая, собст. дача.

առ. 5—5

Ա Ր Ա Ր Ա Տ Հ Ա Յ Կ Ե Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

ԿՕՆԵԱԿԸ

առ. (ա. 22, հ. 7, 22, ն. 10) 3—4

ՍԱՌՈՅՑ

Ծախվում է Դիմիտրիի գարեջրի գործարանում։ Дидубійская ул № 2. Ծախվում է 20 պուդից ոչ պակաս։

(առ. 2. կ. ե.) 2—3

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԻԶ

և

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Վ. Ո. Զ Մ Շ Կ Ե Ա Ն Ի

Մնում է իր հին ընակարանում Архивный переулокъ, Յակոբեանի տուն № 22։ Ընդունում է երկու սեռի երեխաների 4 տարեկանների փոքր դասարանների համար։

առ (ե. հ. կ.) 4—10

Լուսանկարիչ-բիտուշօր

ԼԵՒՈՆ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑԸ

մեծացնում է ամեն չափի մեծադիր նկարներ։ Ընդունում է նեգատիվներ, պօզիտիվներ, պօրտրետների բիտուշ, տիպ և պրօեաւլենի։

Նոյնպես տալիս է լուսանկարչական դասեր։ Հասցէն՝ Դանօվսկայա փողոց, տ. № 7։

(կ. հ.) առ. 3—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ահա թէ ինչ. Վերջին տեղեկութիւններ։ Տեղեկատու Զանգեզուրի. Քննադատութիւն է թէ կատակերգութիւն. Մամուլ. Ոչ ոքի խարել չէք կարող. Շարժումներ և հեռանքներ. Բարձրագոյն զբոսոներում. Մի ֆրանսիացու նամակ. Տեղեկութիւններ գաւառից. Գաւառական զրոյցներ. Գծեր դաշնակցական գործունէութիւնից. Հնչակեանների առաջին դեբիւտը. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր.— ՀԵՌԱԳԻՐ-ՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԱՀԱ ԹԷ ԻՆՉ

«Երկիր» լրագիրը փորձում է բարոյական ապիկարութեան մի նոր ապացոյց տալ։

Նա ուզում է սպառնալիքների և բռնութեան հետ կապել «Մշակի» անունը։

Դա այն սուտ զրպարտութիւններից մէկն է, որը գալիս է մի անգամ ևս վկայելու, որ մեր գրական հակառակորդները կորցրել են բարոյական խրատականութեան ամեն մի նշոյլ։

«Մշակ» և բռնութիւն։

Դրանք երբէք չեն կարող միմեանց հետ շաղկապվել և որքան էլ ուզենաք մոլորեցնել հասարակութիւնը, դա կը մնայ ապարդիւն աշխատանք և միայն քամեալի մի զրպարտութիւն։

Մենք բողոքել ենք, բողոքում ենք և կը բողոքենք ամեն մի բռնութեան դէմ, որ գործված կը լինի խօսքի, մտքի, քաղաքացու դէմ և յոյս ունենք, որ մեր հասարակութեան լաւագոյն այժերի եռանդուն և անընդհատ բողոքների շնորհիւ վերջ կը դրվի այդ մեծ աղէտին, որ երբեմն քաղցկեղ մաշում է մեր ժողովրդի կեանքը։

Սպառնալիքները և բռնութիւնը կը մնան դատապարտելի արարքներ և մեծ արատներ մեր ժամանակակից սերնդի տարեգրութեան մէջ։

Կը կատարվի արդեօք բռնութիւնը «Մշակի» վրա, թէ «Երկրի», «Նոր-Խօսքի», «Մուրճի», «Աշխատանքի», թէ մի ուրիշ օրգանի վրա, նա կը լինի դատապարտելի անպայման կերպով։ Մեզ համար այդտեղ տարբերութիւն չը կայ։ Համակրելի թէ անհամակրելի թերթի, բարեկամի կամ հակառակորդի խօսք չը կայ և չէ կարող լինել։

Ով էլ լինի խօսքի, մտքի, գաւառանքի, անհատի վրա բռնացողը, երբէք և ոչ մի ժամանակ չէ կարող «Մշակի» պաշտպանութիւնը գտնել։

Իսկ եթէ դուք կը ցանկանաք մոլորեցնել հասարակական կարծիքը և զոռով վերագրել «Մշակին» այն, ինչ որ բացէ ի բաց մերժվում է նրա կողմից, դուք կը գործէք մի աչքակապութիւն, որը շատ շուտով կը պարզվի և յայտնի կը դառնայ հասարակութեան։

Այն եղելութիւնը, որ բռնազբօսիկ կերպով կապում է «Երկիրը» մեր խմբագրութեան հետ, և այն դատողութիւնները, որ անում է լրագիրը, հետևեալներն են։ Մենք բերում ենք «Երկրի» յօդուածը ամբողջապէս։

Երէկ ժամը մէկ ու կէսին մեր խմբագրատուն ներս խուժեցին երկու յայտնի սրիկաներ մի խումբ տղաներով։ Եւ սկսեց փողոցային հաշա-հրոց, յսխորատանքների և սպառնալիքների մի տարափ՝ խմբագրութեան և ուրիշ ընկերների հասցէին։

Ընկերները պարզապէս դուրս վռնդեցին յսխորատցող պարոններին։

Ահա ձեզ մի վանդալական արշաւանք,—առաջին պտուղը «իսկական հայ մարդկանց» շահատակութիւնների... Ամբոխային կոյր ու նողկալի անգիտակցականութեան մի պոռթկում... Ահա «Մշակի» խմբագրատանը ամիսներից ի վեր ապատանած, սիստեմատիկօրէն նրանից խրախուսած սրիկայական վոմանկի առաջին սխրագործութիւնը։

Զգաստացէք. և դուք տղայամիտ վանդալներ, որ չունիք անգամ պատասխանատուութեան տարրական զգացումը, և դուք «Մշակի» մէջ բաղմած դօնօսչիկ թշնամականներ, գիտակցեցէք թէ ուր էք մղում, թէ ինչ ահաւոր խաղ էք խաղում ձեր բթացած ուղեղներով։ Եւ բարեհաճեցէք ժամ առաջ սանձել ոճրագործ տաքգլուխներին։

Թող սթափվին և բոլոր նրանք, որոնք իրենց կուրութեան կամ ֆանատիկոսութեան շնորհիւ գործիք են դառնում մեր ղաղելի հակառակորդների ձեռքում և վատթար գործի վրայ մաշում մի էներգիա՝ որ արժանի է լաւագոյն գործադրութեան։ «Իսկական հայ մարդիկ» անամօթաբար շահագործում են թիւրքահայոց դատը և իրենց յանցաւոր մեքենայութիւններով ուզում են մղել՝ ձեզ և անգիտակից հասարակութիւնը դէպի մի այնպիսի գրութիւն, որը մեծամեծ չարիքների աղբիւր կը լինի տաճկահայ ժողովրդի և մեր ընդհանուր ազատագրական դատի համար։

Այն օրը, երբ համիդական ենիչերների սպառնալիքը իրօք կը կախվի մեր ինտելիգենցիայի գլխին, երբ մշակական ու մեհրանական թոյնով լցված մի ֆանատիկոս կը յանդգնի ձեռք բարձրացնել մեր զործիչներից որ և է մէկի վրայ—այն օրը մենք չենք, որ պատասխանատու կը լինենք մոլեգնած ժողովրդի դատաստանի համար։

Մենք առաջ բերինք ամբողջութեամբ յօդուածը, որպէսզի մեր ընթերցողները տեղեկանան թէ ինչ գրական ձևերի են դիմում մեր հակառակորդները։

«Մշակը» ինչ գործ ունի այդտեղ։

Ի հարկէ, ոչ մի գործ։

Բայց «Երկրի» դեկավարներին հարկաւոր է ամեն միջոց սուրբ և ընդունելի համարել։

Եւ միևնոյն ժամանակ բաղդացնել ամենն մի բան, տակնուվրա անել խիղճ և արդարութիւն, իսկ յետոյ, խայտառակութեան հասնելուց յետոյ դանգատվել, զայրանալ և նոր սպառնալիքներ կարդալ։

Արհեստական, բռնի և գաւադրական կերպով յիշատակելով «Մշակի» անունը, դուք միայն մի ամօթալի էջ եք աւելացնում ձեր սխրագործութիւնների քրոնիկոնի մէջ։

Գրական բարքերի այսքան անկում։

Մի բան միայն մեզ համար միսթերական է, որ «Երկրի» խմբագրութիւնը վերջապէս բողոք է յայտնում սպառնալիքների և բռնութեան դէմ, և այդպիսով նա վերջվերջոյ միանում է այն բողոքին, որ մենք ամիսներ շարունակ մղում ենք սիստեմական սպառնալիքների և բռնութիւնների դէմ։

Բողոքեցէք բռնութիւնների դէմ, մենք ձեզ կը միանանք այդ գործում, մենք ձեզ կողջունենք, մենք ձեզ կը ծափահարենք։

Թող բռնութեան դէմ մեր և ձեր բողոքը վերջ դնէ այն վերին աստիճանի ծանր հիւանդութեան, որից տառապում է մեր ժողովուրդը։

Բայց դուք ձեր բողոքների մէջ մրցնում էք կեղծ գծեր, խեղաթիւրում էք փաստերը և երևոյթները և չէք ցոյց տալիս այն անկեղծութիւնը, որը անհրաժեշտ է, որպէսզի իսկապէս մենք դարման անենք մեր ժողովրդի սիրտը կրծող ցաւին։ Դժբաղդաբար, դուք թոյլ էք տուել ձեզ ձեր խմբագրատանը մի շարք սպառնալիքներ և տուել էք նոյն իսկ անունները։

Իսկ յետոյ, նոյն օրը, ձեր կողմից եկան հինգ թէ վեց պարոններ «Մշակի» խմբագրատուն, որոնք ադամուկով, մի քանիսը գդակները գլխին, մի քանիսը խօսքը ընդհատելով կարգացին մեզ սպառնալիքներ և հեռացան։ Նրանք տուին «Երկիր» լրագրի խմբագրութեան անունը, որտեղից և եկել էին մեր խմբագրատուն։ Մենք նրանց էլ յայտնեցինք, որ մենք անպայման կերպով բռնութիւնների դէմ բողոքել ենք և բողոքելու ենք, առանց շեղվելու մեր հիմնական սկզբունքներից։

Ահա ինչ են ասում պատերը։ Եւ դուք, որ բողոքում էք սպառնալիքների և բռնութիւնների դէմ, չէիք ցանկացել նախ և առաջ խրատել ու հանդոել այն մարդկանց, որոնք «Երկրի» խմբագրութիւնից եկել էին «Մշակի» խմբագրատուն իրանց սպառնալիքներով։

Բայց ժամանակն է վերջապէս սթափվելու։

Ինչ էլ սակայն պատահի «Մշակի» գործողներին, նրանք մինչև վերջին շունչը կպաշտպանեն «Հեռու ամեն մի բռնութիւն խօսքի, գրչի, քաղաքացու դէմ»։ Եւ «Մշակը» հաստատ իր դրօշակին կը պաշտպանէ ժողովրդական ազատութեան սուրբ դրօշակը։

Մենք չենք կրթել և չենք կրթում բռնութիւն գործ դնողներ։ Մենք ընդհակառակը եղել ենք և մնում ենք անհատի, համայնքի և հասարակութեան բարոյական ազատութեան հաւատարիմ, համոզված լինելով, որ ժողովուրդը մեզ ճանաչում է, հաւատում է և արդէն սկսել է գնահատել կեղծիքը անկեղծութիւնից, ժաքուրը և հարազատը ամեն տեսակ զրպարտութիւններից։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Սղնախ, հոկտեմբերի 1-ին

Երկուշաբթի օրը գաւառապետը կանչեց քաղաքացիներին և ասաց նրանց մօտաւորապէս հետևեալը. «Երբ ես գալիս էի Սղնախ, ինձ առաջարկեցին տանել հետս զօրք, զրագուներ, կօզակներ, հետևակներ, սակայն ես չարեցի, ասացի, որ նախ կը գնամ, կը ծանօթանամ քաղաքի հետ։ Զօրքի այստեղ գալը կարելի է վատ հետևանքներ ունենայ քաղաքի համար, ապացոյց ձեզ ուրիշ քաղաքներ. ուստի տուեցէք մեզ անվստահելի մարդկանց, մենք նրանց կը հեռացնենք քաղաքից, ընտրեցէք ամեն թաղում մի մարդ, որ հսկի քաղաքի վրա, տալիս եմ ձեզ մի շաբաթ ժամանակ»։ Քաղաքացիները պատասխանեցին, որ կը մտածեն այս մասին։

№. №.

Բուենոս Այրես, հոկտեմբերի 5-ին

Քաղաքապետի վրա ռումբ նետվեց։ Վերջինս և երեք ուրիշներ՝ թեթև վիրաւորված են։ Բռնված են 3 կասկածաւոր անձինք։

(«Հեռ. Գործ.»)

Նոր-Նախիջևան, հոկտեմբերի 7-ին

Նահապետ եպիսկոպոսի թաղումը յետաձգվեց մինչև կիրակի օրը։

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ

Գօրիս, սեպտեմբերի 24-ին

Քարահունջում մնացող զինուորները այսօր փոխվեցին։ Այժմ նրանց թիւը աւելի շատ և պահանջները աւելի ծանր են։

Գիւղում խոտ, գարի չէ մնացել և վերջին երեք օրերս ուրիշ գիւղերից էին ձեռք բերվում։

Քարահունջցիք, գիւղի դրութիւնը ի նկատի առնելով, հազիւ կարողացան կառավարութեան առաջարկած պահանջների երկու կէսին միայն, որոնց դէմ կարելի էր դրամով պատասխանել, բաւարարութիւն տալ։ Սակայն, նրանք չազատվեցան պատժից և նրանց առաջարկված է մի անյայտ, մի անելանելի պահանջ ևս. այդ աւազակապետին վարչութեան ձեռքը տալն է, որի մասին գիւղը այնքան անտեղեակ է, որ երկու տարեկան մանուկից մինչև 100 տարեկան ծերուկը երդվել կարող են, որ ոչ մի տեղեկութիւն չունեն։ Եւ հէնց այդ կէտի վրա է կանգ առել կառավարութիւնը։

Անցնենք խնձորեսկցու սպանութեան դէպքին։

Պրիստաւը և մի քանի կօզակներ գնացին Մամադաքի և Ալլզուլլի ու Շապլի սահմանում սպանված Բաբա Իւղբաշեանի դիակը բերին։ Սպանվածի վրա կան հինգ գնդակի վէրքեր. մէկը ուղիղ ճակատի վրա է, իսկ միւսները՝ կրծքի։ Թփված է երեքգծեան հրացանով։

Կառավարութեան անաչառ վերաբերումը, թուրքերին պատժելու տեսակէտից, շատ շուտով կը պարզվի։

Դատանք այժմ մինքէնդցիներին, այդ խեղճ ու կրակ, անտիրական հայերին, այդ քաղցած ժողովրդին։

Մինչև այժմ մեծ յոյս ունէինք, որ սովի, քաղցի մատնված մինքէնդցիք կարող կը լինեն իրանց արտերից լաւ բերք ստանալ. սակայն այսօր մեր մինչև այժմ ունեցած բոլոր յոյսերը չքացան, որովհետև բացի հնձելոր մինքէնդցիների հաղորդած լուրերը, մինքէնդցի Իւղբաշի Ավետը ևս իր կողմից բարոյական (№ 47) յայտնեց գաւառապետին, որ մինքէնդցիների բոլոր ցանքերը թէև լաւ հունձ էին խոստանում, բայց վերջին 10—15 օրվայ ընթացքում մէկերը կերան, փչացրին և այժմ ոչինչ չը կայ հնձելու։ Եւ այսպիսով բարեբար կառավարութեան 2400 պ. սերմը ոչ մի բերք, ոչ մի օգնութիւն չը կարողացաւ տալ թշուառ մինքէնդցուն։

Եւ այս դառն իրականութիւնը հետևանք է կառավարութեան զօրք չը տալուն, որի համար մինքէնդցիք 6-րդ անգամ էլ դիմեցին։

Սերմը ցանված է եղել Գեօլեր, Բօղուքջալան և Դիքեր կոչված վարելահողերում և բոլորն էլ փչացված են։ Աղի արցունք թափելով մինքէնդցիք Աստծուց անգամ գրժգոհում են, որ իրանց աշխատանքը, թափած քրտինքը ի չիք դարձաւ, մէնքերին փայ եղաւ։

Այդ, նպաստամատոյց յանձնաժողովներից ուղարկված Զանգեզուրում բաժանելիք ցորեն, սերմացու կամ ալիւր բաշխող յանձնախմբին մնում է նախ՝ որոշ մաս յատկացնել ֆնասված և այժմ սոված մինքէնդցիներին և Խնածախում ապրող բուսեղէնով կերակրվող զէյլեցիներին և ապա՝ միւս արկածեալներին ի նկատի առնել։ Բոլոր մինքէնդցիների յոյսերը գետը տարաւ, նրանց քաղցած ու մերկ որբերի բաժինը մէնքերին կերակուր դարձաւ։

Մինքէնդի քահանան և ներկայացուցիչը թշուառ ժողովրդի հետ մնացած են յուսահատ և չը գիտեն ոչ ի՞նչ դիմեն շուտափոյթ օգնութիւն ստանալու համար։

Ծաղիկ հիւանդութիւնը տարածված է մի քանի գիւղերում. ունենում է զոհեր։ Գօրիսում ապրող մինքէնդցիների բոլորի տներում գրեթէ առանց բացառութեան կան հիւանդ երեխաներ։

Սպանդարեան

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ Է, ԹԷ՞ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

(Սլաքի և Գ. Խատիսեանի յօդուածների առիթով)։

Զարմանալի ժամանակներում ենք ապրում մենք։ Դանվում են մարդիկ, որոնք լրջու- թիւնը, գիտութիւնը և բարեխղճութիւնը աւելորդ բան են դարձրել, իսկ փոխարէնը զարդարում են իրանց յանդգնութեամբ և աչքապուութեամբ։ Որքան միամիտ—եթէ չասեմ աւելին—պէտք է լինեն այդպիսիները, որ կարծում են, թէ բանիմաց հասարակութիւնը իրանց «ֆոկուսները», որոնք ոչ այլ ինչ են, եթէ ոչ ագիտութեան, նեղ խելքի և անսահման հանաձակութեան արդասիք, կընդունէ իբրը ճշմարտութիւն։

Դուրս գալ հասարակութեան առաջ, մամուլի մէջ, խօսել մեծ ալէմբօզ, երբեմն գիտնականի դիմակի տակ, դարձել է մի սովորական, բայց ցաւալի երևոյթ։ Իսկ երբ վերցնում էք նրանց առաջից կեղծ կեղևը, քննադատութեան էք ենթարկում բովանդակութիւնը, մնում էք ապշած նրանց խոր աբգիտութիւնից, տրամաբանութեան բացակայութիւնից։ Իբրև փայլուն փաստ ասածիս կարող են ծառայել, ի միջի այլոց, այն յարձակումները, որ կատարվում են կատաղի, բայց անմիտ կերպով «Երկիր» լրագրի համարներում՝ մի խումբ իրաւաբանների եղբակացութեան առիթով, որ նրանք տուել են չարաբաստիկ Յովհաննեան գպրոցում տիրապետող «նոր կարգերի» մասին։ Եւ ես եղել եմ այդ իրաւաբանների թեռում, հետևապէս անկարող եմ լռութեամբ անցնել։

Ցիշեալ խնդրի մասին «Երկիր» № № 3 և 4-ում տպվել են 2 յօդուածներ. մէկը Սլաքի ստորագրութեամբ, իսկ միւսը՝ իրաւաբան Գ. Խատիսեանին է պատկանում։ Առաջին յօդուածը լի է միմիայն հայհոյանքներով, տափակ սրախօսութիւններով, և եթէ կուզէք, նրա մէջ կայ փորձ նոյն իսկ ինսինուացիա անելու այն իրաւաբանների հասցէին, որոնք իբրև մասնագէտներ պ. Ա. Անանեանի հրաւէրով տուել են իրանց եղբակացութիւնը ամենայն անաչառութեամբ յանձին իրանց մասնագիտական պարտաւորութեան, ամենայն կերպ աշխատել են մեզ օբէկտիվ հողի վրա, հեռու ամենայն կուսակցական տեսակէտներից և կողմակի հանգամանքներից։ Ասացէք խնդրեմ, որ քաղաքակիրթ, լուսաւոր հասարակութեան մէջ կարելի էր սպասել, որ մի յատկապէս մասնագիտական եղբակացութեան համար, փոխանակ քննելու և քննադատելու միմիայն եղբակացութիւնը ըստ էութեան, ենթարկել քննութեան և դատապարտել մասնագէտների անձնաւորութիւնը, ունենալով սոսկ մի նպատակ—ազդել խուժանի վրա, որպէս զի մասնագիտական եղբակացութիւնը չը բանայ նրա աչքերը։ Այդ տեսակ յօդուածի միակ պատասխանը կը լինի մեր խորին զղջանքը։

Այժմ անցնում եմ պ. Խատիսեանի յօդուածին։ Պ. Խատիսեանը թէև փորձում է քննադատել իրաւաբանական տեսակէտից յշեալ եղբակացութիւնը, բայց կրկին, կարծես, ուզում է յետ չը մնալ իր նախորդից—համարձակութեան նկատմամբ։ Մեր ութ իրաւաբաններիս եղբակացութիւնը անուանում է «բիւրօկրատիկ, յետամնաց մտածողութեան արդիւնք, պատճառաբանութեան ձևը քրէհով վերցված կանցելիարիայից» (հրաշալի սրախօսութիւն...) և այլ համանման գոհարներով նա զարդարում է իր յօդուածը։ Թողնենք իրան, պ. Խատիսեանին, անտեղի, անմիտ խօսքերի կուտակը, անցնենք նորաբղջոջ իրաւաբանի յօդուածին ըստ էութեան։ Որքան ողորմելի է այդ կողմից դիտնական ասպետ հռչակված Խատիսեանը, թէև ինչ հիսթափումն, երբ ծանօթանում էք նրա յայտնած մտքերի հետ, որոնք մէկը միւսից խակ, մէկը միւսից անհիմն, հակաիրաւաբանական և հակառամտաբանական են։ Եթէ այդ գրվածքը պատկանէր մի թերուս դիմնազիստի, չէինք զարմանալ. բայց երբ տեսնում ենք, որ այդ դուրս է եկել մի համալսարանաւարտ իրաւաբանի գրչից, չենք կարող ամենաքիչը չը ցաւել։ Պ. Խատիսեանը իր յօդուածի սկզբում կարուկ կերպով յայտնում է, որ ութ իրաւաբանների եղբակացութեան սխալ լինելը կասկածից դուրս է. ամբէրմ. բայց ինչպէ՞ս է նա պատճառաբանում, հետաքրքիրն այդ է։ Պ. Խատիսեանի ասելով Յովհաննեան դպրոցի հին հոգաբարձութիւնը—հակառակ իրաւաբանների եղբակացութեան—իրաւունք չունէր վարել ուսումնարանի գործերը իր լիազօրութիւնը վերջացնելուց յետոյ։ Ի միջի այլոց, նա իրաւունք չունէր ընտրել տեսուչ պ. Լ. Սարգսեանին։

Այդ հարցը վճռելու համար, պ. Խատիսեանի կարծիքով, պէտք է իմանալ, որ դա «սահմանադրական» հարց է և դրան լուծելու համար պէտք է դիմել ոչ թէ Ռուսաստանի օրէնքներին ու կարգերին, այլ օտար, ռամկավարական օրէնսդրութիւններին, ուր ընդունված է, որ ժողովրդի ընտրեալները իրաւունք չունեն օգտվել ժողովրդի տուած իրաւունքներից աւելի երկար, քան այդ որոշված է օրէնքի մէջ։ յետոյ, պ. Խատիսեանի կարծիքով, նոր հոգաբարձուները իրաւունք ունէին հեռացնել պաշտօնից պ. Լ. Սարգսեանին, որովհետև բոլոր «դեմօկրատիկ երկրներում ընդունված է ամենալայն կերպով, որ երբ փոխվում է նախարարութիւնը, փոխվում են նաև պաշտօնեաները»։ Ամեն մի թէզիսը պ. Խատիսեանի սխալ է և անհիմն, թէ փաստային, թէ պատմական և թէ գիտական տեսակէտից։ Եթէ ի նկատի առնենք, որ այս բոլոր կռիւների պատճառը եղել է այն, որ հին հոգաբարձութիւնը տեսուչ է ընտրել պ. Լ. Սարգսեանին, որի ընտրութիւնը անհաճելի մնաց նրա հակառակորդներին, թէև հակառա-

կորդները մինչև հիմա մի խօսք անգամ չեն ասել նրա մանկավարժական թերութիւնների մասին, և եթէ ի նկատի առնենք ևս այն, որ պ. Սարգսեանը ընտրվել է սեսուչ մինչև յուլիսի 3-ը, երբ հին հոգաբարձութեան լիազօրութիւնը դեռ չէր վերջացել, դուրս կը գայ, որ հենց իրա պ. Սարգսեանի ընտրութիւնը եղել է օրինական։ Պ. Խատիսեանի սխալը գուցէ բացատրվի նրանով, որ նա իրան նեղութիւն չէ տուել ծանօթանալ գէթ գործի փաստային կողմի հետ։

Ոչ պակաս անհեթեթութիւն են ներկայանում նրա մեղադրական պատճառաբանութիւնները կամ աւելի լաւ է ասել, անտեղի, փքուն ֆրազները։ Պ. Խատիսեան դնում է, որ Յովհաննեան դպրոցի հոգաբարձական հարցը սահմանադրական հարց է և դա չի լուծելու համար պէտք է դիմել «սուր դեմօկրատիկ երկրների օրէնսդրութեան». սոսկալի շփոթութիւն սահմանադրութեան մասին։ Ինչպէս կարելի է Յովհաննեան դպրոցի հոգաբարձութիւնը համարել սահմանադիր մարմին, քանի որ նա ինքը ոչինչ չէ սահմանում և իրաւունք էլ չունի սահմանելու։ Նա հրաւիրված է վարել դպրոցի գործերը, դպրոցի հիմադիր Յ. Անանեանի ընծայագրի սկզբունքներով, հոգալը իշխանութեան ներքոյ և յարմարվելով տիրապետող օրէնքների հետ. ուրեմն, Յովհաննեան դպրոցի հոգաբարձութիւնը հանդիսանում է ոչ թէ սահմանադրական, այլ մի վարչական մարմին։ Սակայն պ. Խատիսեանը, տալով Յովհաննեան դպրոցին սահմանադիր մարմնի բնաւորութիւն, գնում է, որ հին հոգաբարձուները իրանց լիազօրութիւնները պէտք է շարունակեն միմիայն որոշած ժամանակամիջոցը (3 տարի), ինչպէս այդ կատարվում է «սահմանադրական երկրներում»։ Բայց նա մոռանում է, որ այն երկրներում, ուր տիրապետում են ռամկավարական սկզբունքներ, ուր օրէնքները սահմանում են ժողովրդի ընտրեալները, այն տեղերում էլ լիազօրութեան շրջանը խիստ կերպով կատարվում է միմիայն օրէնսդրական հիմարութիւնների վերաբերմամբ, որովհետև պարլամենտների, պալատների, ընկերատգի, ընկերարատի և այլ համանման հիմարութիւնների անդամները հրաւիրված են, ի միջի այլոց, օրէնքներ սահմանել որոշ ժամանակամիջոցում, և երբ այդ ժամանակամիջոցը վերջանում է, հիմարութիւնները փակվում են մինչև նոր կոչը. այն, ինչ չէ կարողացել կատարել մի կոչ իր գործունէութեան ժամանակամիջոցում, կատարում է նոր կոչը նոյնպէս ժամանակամիջոցում։ Իսկ որովհետև կեանքը կանգ չէ առնում, նա ընթանում է, և նոյն իսկ այդ ռամկավարական երկրներում հին կարգերը օրէնսդրական տեսակէտից մեռած են պարտադիր, մինչև նրանց փոխելը, ընդունված եղանակով։ Եւ դուք, պ. Խատիսեան, չէք կարող ցոյց տալ ոչ Անգլիայում, ուր ընտրվի են, օրինակ՝ դատաւորները, կամ մի ուրիշ երկիր, որ զանազան պաշտօնեաներ նոյնպէս ընտրվի են, որ ընտրվի պաշտօնեաները անմիջապէս հեռանան իրանց պաշտօններից, երբ իրանց ժամանակամիջոցը լրանում է, առանց յանձնելու նորերին։ Թողնել պաշտօնը մինչև նորի ստանձնելը, այդ տեսակ պահանջը անբնական է և տրամաբանութիւնից զուրկ։ Երեսակայեցէք, որ ինչ-ինչ պատճառներով նորի պաշտօն ստանձնելը ուշանում է. օրինակ ընտրվի հոգաբարձուների, ընտրվի դատաւորի, ընտրվի ըժշկի և այլն, և այլն. և մինթէ դուք կարող էք ենթադրել, որ հին հոգաբարձութեան յանձնած դպրոցները, հին դատաւորներին յանձնած դատարանները, հին ըժշկերին յանձնած հիւանդանոցները պէտք է փակվեն, որովհետև նրանց լիազօրութեան ժամանակամիջոցը լրացել է։ Տեսնում էք, թէ ինչ արսուրդի է հանում ձեր հայեցակէտը։ Դուք ի հաստատութիւն ձեր մտքի—բերում էք մի օրինակ. դեմօկրատիկ երկրներում ընդունված է՝ երբ փոխվում է նախարարութիւնը, փոխվում են նաև պաշտօնեաները։ Կրկին ցաւալի թիւրիմացութիւն ձեր կողմից։ Չէ՞ կարելի աւելի պարզ ասել և ցոյց տալ, թէ այդ որ դեմօկրատիկ երկիրն է, ուր նախարարութեան հետ փոխվում են նաև պաշտօնեաները. օրինակ — լուսաւորութեան նոր նախարարի հետ փոխվում են նրա դիւանապետները, փոխվում են բարձրագոյն, միջնակարգ և մասնաւոր զբաղոցների և այլ ուսումնական հիմարութիւնների պրոֆէսօրները, վերատեսուչները, տեսուչները, ուսուցիչները և ուրիշ զանազան պաշտօնեաներ. այդ տեսակ երկիր երկրագնդի վրա չը կայ. իսկ եթէ նա տեղ է գտել զանազան անհաստեղի ֆանտազիայում, այդ մասին մենք ասելիք չունենք։ Բոլոր սահմանադրական երկրներում, ուր կան պատասխանատու նախարարութիւններ, նախարարները կազմելով մի այպէս ասած նախարարական կաբինէտ, ներկայացնում է մի որոշ ուղղութիւն և ամեն մի ուղղութեան սկզբունքները աշխատում է մացնել իրան յանձնած շրջանում, բայց դրա համար նրանք իսկոյն չեն վանդում հին պաշտօնեաներին. մասնակի փոփոխութիւններ կատարվում են, բայց դա մի պարտաւորական և ընդունված կանոն չէ։ Պ. Խատիսեանի տարօրինակ դատողութեան պակաս պէտք է համարել նրա գրվածքի այն մասը, որի մէջ նա յայտնում է, թէ «պ. Ա. Անանեանը բոլորովին ապօրինաբար է իրան յատկացնում հոգաբարձուի կոչումը». և փէսէք, ընթերցող, ինչու. որովհետև Ա. Անանեանը դպրոցի հիմադիր Յ. Անանեանի տոհմից չէ Խատիսեանի ասելով։ Ինչ մխամութիւն, ինչ խորը տգիտութիւն—նոյն իսկ ամենատարբերական հարցերում։ Հանգուցեալ Յ. Անանեանի ընծայագրի մէջ՝ 6-րդ կէտում ասված է, որ նրա տոհմի աւագը, արական սեռից, պէտք է լինի անփոփոխ հոգաբարձու զբաղոցի։ Գերմանիայի և Ֆրանսիայի և Միացեալ բոլոր կուլտուրական երկրների օրէնսդրութիւնները ընդունում են, որ տոհմը ոչ այլ ինչ է, եթէ ոչ արենակցական կապերով կապված արական և իգական սեռին պատկանող անձանց մի համախմբում, ունենք ծագում են մի նախահայրից. այդ կապը համարեա բոլոր պետութիւններում իրաւունք է տալիս տիրելու ժառանգական գոյք, կալուածք։ Այդպէս են որոշում տոհմը իրաւագիտութիւնը և տիրապետող օրէնքները։ Բոլորովին հաժանման կերպով տոհմի էութիւնը որոշում են և Ռուսաստանի քաղաքացիական օրէնքները, որոնք պարունակում են X-րդ հատորի I-ին մաս. յօդ. 196, 112 և 1113։ Եթէ ի նկատի առնենք, որ պ. Ա. Անանեանը դպրոցի հիմադիր Յ. Անանեանի տոհմից չէ Խատիսեանի ասելով։ Ինչ մխամութիւն, ինչ խորը տգիտութիւն—նոյն իսկ ամենատարբերական հարցերում։ Հանգուցեալ Յ. Անանեանի ընծայագրի մէջ՝ 6-րդ կէտում ասված է, որ նրա տոհմի աւագը, արական սեռից, պէտք է լինի անփոփոխ հոգաբարձու զբաղոցի։ Գերմանիայի և Ֆրանսիայի և Միացեալ բոլոր կուլտուրական երկրների օրէնսդրութիւնները ընդունում են, որ տոհմը ոչ այլ ինչ է, եթէ ոչ արենակցական կապերով կապված արական և իգական սեռին պատկանող անձանց մի համախմբում, ունենք ծագում են մի նախահայրից. այդ կապը համարեա բոլոր պետութիւններում իրաւունք է տալիս տիրելու ժառանգական գոյք, կալուածք։ Այդպէս են որոշում տոհմը իրաւագիտութիւնը և տիրապետող օրէնքները։ Բոլորովին հաժանման կերպով տոհմի էութիւնը որոշում են և Ռուսաստանի քաղաքացիական օրէնքները, որոնք պարունակում են X-րդ հատորի I-ին մաս. յօդ. 196, 112 և 1113։ Եթէ ի նկատի առնենք, որ պ. Ա. Ա-

նանեանը դպրոցի հիմադրի հարազատ եղբայրն է, որ եղբայրներ համարվում են երկրորդ աստիճանի արենակցական բարեկամները, որ հիմադրից արական սեռի անմիջական ժառանգներ չեն մնացել և վերջապէս, որ այդ տոհմի մէջ աւագագոյնը արական սեռի՝ է պ. Ա. Անանեանը, չէ կարելի չը գալ այն խորը համոզման, որ պ. Ա. Անանեանը ամենայն իրաւամբ պէտք է համարվի օրինական հոգաբարձու Յովհաննեան դպրոցի, եթէ մինչև անգամ չասենք այն, որ նա միենոյն ժամանակ հաստատված է Հայոց Կաթողիկոսի կօնդակով այդ կոչման մէջ։

Ահա թէ ինչ անհեթեթութիւններ, անմտութիւններ են պարունակվում պ. Խատիսեանի յօդուածի մէջ։ Սակայն, չը նայած նրա անպարտաւորականութեան, նրա անտեղակ լիներլուն շօշափած հարցերում, այնուամենայնիւ այդ արդեօք չէ եղել, որ նա դուրս գայ և «Երկրի» էջերում անանձն կերպով քննադատի ուրիշներին։

Այդ քննադատութիւն չէ, այլ կատակերգութիւն

Այնտեղ, ուր հարկաւոր է մտքի ոյժ, գիտական պատրաստականութիւն, այնտեղ լոկ ֆրազները կարող են միմիայն ակամայ ժպիտ յարուցել։

Սամսոն Յարութիւնց

## ՄԱՄՈՒԼ

Ամերիկայի Բոստոն քաղաքում հրատարակվող «Կռունկ» հայ-աւետարանական թերթը խօսելով այն հայեացքների մասին, որոնք արտայայտվել են «Մշակի» մէջ պ. Ս. Տիգրանեանի և Մատթէոս վարդապետի յօդուածներով, ինչպէս և Մելքան քահանայի յօդուածներով, իր կողմից քննադատեցնե է նեթարկում Տիգրանեանի հիմնական գաղափարը ժողովրդի իրաւունքների մասին «Եկեղեցական հարցերու շուրջը» վերնագրով մի յօդուածի մէջ, որ մենք առաջ ենք բերում, իբրև հայ-աւետարանական մի թերթի կարծիք։

«Եթէ ժողովուրդը իրաւամբ հրանդիդ ու հրամանատու եղած ըլլար իր կողմէն ընտրուած և իրեն համարաւոր բոլոր պաշտօնեաներուն, ինչպէս վերի կարգին մէջ կը տ՝ամարանէ Պրն. Տիգրանեան, այսօր չպիտի ունենայինք երբեք ներկայ փառապանծ քաղաքակրթութիւնը։ Դիւրին պիտի ըլլար մեզ ժամանակը ընել մէկէ աւելի պաշտօնէութիւններ կրթական քաղաքական ու կրօնական կենաց մէջ, զորս կատարելու կոչուած անձը, ժողովուրդէն ընտրուած ու ժողովուրդին համարաւոր պաշտօնեայ մը, ժողովուրդէն չտանար իր գործունութեանց հրանդիդներն ու հրամանները։ Բայց ինչ հարկ հեռուներն երթալ. բուն իսկ այս գրութեանս առիթ տուող իրողութիւնը պատշաճ օրինակ մը կընծայէ մեզ։ Աստեղծն Հայոց Կաթողիկոսը, ժողովուրդէն ընտրուած հոգեւոր պաշտօնեայ մը, որմէ հրանդ կամ հրաման ստացու համաձայնաբար իրաւունք տալ կանանց՝ մասնակցելու եկեղեցական ամեն գործի մէջ։ Ժողովուրդը որեւ

հրամայողական պահանջի տակ,—և երբ այդ կից բաղկացած խմբագրատուն, ուր կատարվում էր ոչ պակաս գաղափարական գործ։ Դա Գրիգոր Արծրունու «Մշակի» խմբագրատունն էր։ Ո՞ր հայը չէ ճանաչում նրան։ Դուք կարծում էք, թէ Արծրունին, գնալ վերջին տարիները, չէր կարող փոքր ի շատէ լայն ապրել, գտնէ մի ոտանձին շվէյցար պանել, որ ինքը սահմանված չը լինէր անձամբ բացել ու փակել այցելուների համար դուռը։ Չէ, նա կարող էր։ Բայց նա չէր անում, նա համառ էր։ մի յատկութիւն, որից զուրկ են այժմեան դաշնակցական շէֆերը, սակայն բացատրութեամբ։ Մենք սովոր ենք առհասարակ հաւատալ և ասել մեր միջոցները այն մարդկանց, որոնք համառ են թէ անձնական և թէ հասարակական գործերում։ Դաշնակցութիւնը, առանց բռնի օյժի, առաջ վայրում էր ժողովրդի հաւատը։ Վերջին տարիների զեպքերը եկան կրկնապատկելու այդ հաւատը և ժողովուրդը լարեց իր օյժերը, գնելով ինքնապաշտպանութեան գործի սեղանի վրա առատ, մեծաքանակ գումարներ։ Գումարները գալիս էին կամովին, ինքնաբերաբար։ Համոզմունքը պահանջում էր բաւականապէս և չը իրականացնել սուրը գործից ժողովրդին։ Համոզմունքը պահանջում էր ոտը վերմակի չափ մեկնել։ Բայց այլ կերպ էին մտածում զեկավարները։ Փողը մարդ է փչացնում և ապա՝ դարձնում։ Եւ տուրքը դարձաւ ոչ կամովին... է՛, դա արդէն մի կրօտաբեր քայլ էր, որ առաջացրեց հասարակութիւնը զէպի գործը։ Թշդոնների թիւը աստուարանում էր օրերով, ժամերով... Ժողովրդական դայրոյթի օգտը սկսում էր աւելի և աւելի մօտենալ և, ով գիտէ, որքան է հեռու հեղեղը։

Ի զէպ, պէտք է նկատել, որ Դաշնակցութեան գոյութեան ամբողջ 19—12 տարվայ ընթացքում սահման հայտ չէր անցնում։ Շատերը հեռացան ասպարէզից, որոնք կողմնակից չէին Դաշնակցութեան բռնած նոր ընթացքին։ Ընդհանուր ժողովը էր միայն իրաւասու այդպիսի մի կարդնալ հարցում և ոչ մի սէկցիա, բայօնական ժողով իրաւունք չունէր ինքնագլուխ տարողական սիստէմին զիմել առանց ընդհանուր ժողովի վարողմանու։ Իսկ որքան յայտնի է, տարմանքը մոցրած է վերջին ժամանակները անկանոն կերպով, առանց կանոնաւոր ընդհանուր ժողովի։ Այսուհետև՝ մի շարք դաշնակցական գնեալ-նահանգապետների զանազան տեղերում գործադրած վարչութիւնները, լէգալ-սիստեները...

Իսկ ժողովուրդը այլ կերպ էր դատում և դատողութեան այդ այլ կերպը գալիս էր խախտելու հաւատը, իսկ յետոյ սերը զէպի գործը։ Դաշնակցութիւնն էլ իր կողմից յայտարարում էր այդպէս դատողներին «օրէնքից դուրս», «դաւաճան»...

Զը նայած որ Դաշնակցութիւնը անգին զումարներ ուներ իր ձեռքի տակ. բայց և այնպէս նրա հասարակ, մահկանացու անդամները, զինուորները, գրեթէ, չէին օգտվում այդ զումարներից։ Խօսքը մեծաւորների մասին չէ։ Եւ այդ հանգամանքը մոցնում էր զինուորների շարքերի մէջ զեմօրալիզացիա։ Գաղտնիութիւնը չը գիտէ, գոնէ մօտաւոր պատմութիւնը, աւելի տեղ զինուորական ոյժ, քան Նապոլէոն I-ի զրքը, որ անուանվում էր մ ծ (великая армія)։ Զինուորական հանճարն ճանաչված Նապոլէօնը, երբ նրան Ֆրանսիայից հարցնում էին, թէ որքան զրաւ տաւոր ուզուրեն Սպանիա զօրքին կերակրելու համար, պատասխանում է, թէ Սպանիան հարուստ երկիր է և լի ու լի կերակրում է զօրքին, պահանջում է ուղարկել սալիր միայն, որ տեղափոխեն Ֆրանսիա թշնամու երկրում կուտակած թանկը, ասրը։ Ալան-թարանը (породество) սոսափկ զարգացած էր Նապոլէօնի զօրքի մէջ, որովհետև գնդապարանը չէր կերակրում զօրքին, այլ նուաճած երկիրը, յաղթված ժողովուրդը... Inde ira—այստեղից է սկսվում զեմօրալիզացիայի սկիզբը և յետոյ անկման պատճառը։ Քանի՞ քանի՞ մարդկանցից լսել ենք զարհուրելի պատմութիւններ, թէ ինչպէս քաղցած, տկար հայրը ստիպված է եղել իր երեխայի բերանից հացի կտորը խլել ու տանել գիւղի, քաղաքի դաշնակցական զինուորին, վերջին ուշաղը, հաւ գնել նրա տրամադրութեան տակ... Զէին տանում, ստիպում էին ընի ծեծով, մտանկով... «Մեզ աւելի ձեռնտու է թուրքանալ—ասում էին կամացուկ յուսահատված, անարդված մարդիկ մի մեծ նահանգական քաղաքում—մենք խեղդվում ենք զրանց ձեռքում»... Ան ու սարսափն էր կապում մարդկանց Դաշնակցութեան հետ։

Ես չեմ մոռանում գաւառական կոմիտէի մէկ նիստը։ Ամտեղ անդամները պաշտօնապէս բարձրաձայն «ուխտնա» էին կնքում Դաշնակցութեան հասցէին և զրպարտիչներ անուանում նրանց, որոնք բողոքում են։ Երբ ես այդ կոմիտէի անդամներից մի քանիսին նիստից դուրս հարցրի—արդեօք անկեղծ էին նրանց ճառերը յօդուտ Դաշնակցութեան, նրանք զողզողալով շշնջացին. «Ի՞ սէր Աստուծոյ, բաթր մի խօսք, Դաշնակցութիւնը հազար ու մի ականջ ունի,—կը լսեն և ոչ գիտէ, գլխիս թնչ խաթարա բերեն։ Ի հարկէ, ստիպված ենք այդպէս խօսել։ Իլաղներս ինչ»... Անդամները, որոնք ինձ այդպէս պատասխանեցին, տեղական ժողովրդի միջից էին և ոչ պրոֆեսիոնալ դաշնակցականներ։

Ամենին նեղեալ միջոցներ, կրկնում ենք և զինուորները զարձեալ ապրում են ժողովրդի հաշուին անտաշիւ կերպով։ Ի՞նչով բացատրել այդ երևոյթը։ Եթէ իսկապէս Դաշնակցութիւնը տալիս էր և տալիս է ապրուստի միջոցներ զինուորներին, այդ ժամանակ հարցնում ենք—ինչու՞ չէը սանձահարում իր ընչաքաղց զինուորների կրքերը ու լայն ախորժակը։ Իսկ թէ Դաշնակցութեան զեկավարները շատ լաւ տեսնում էին ու լռում զինուորների արարքների մասին՝ դա փաստ է։ Ուաւերը միայն չէին լսում և կրքերը միայն չէին տեսնում։ Իսկ զեկավարները ոչ խուլ էին և ոչ կոյր։ Ահա անտեսելի յանցանքը։ Դաշնակցութեան զինուորը, ինքնապաշտպանութեան մարտիկը մօրօղէօր չէ կարող լինել։ Մեր նախկին և այժմեան քաջարի, վեհանձն, ազնիւ ֆէդայիների շարքերը, ընորհիւ Դաշնակցութեան արդի զեկավարների, լցվել են անանձիս, յանցաւոր, նոյնիսկ խաչագողութեամբ պարապող էլեմենտներով։ Նապոլէօնի զօրքը գործում էր հայրենիքից, Ֆրանսիայից դուրս, օտար երկիրներում, իսկ Դաշնակցութեան զինուորը, որոնց յանձնված է հայի կեանքը, պատիւը, տան ու տեղի պաշտպանութիւնը, գործում է իր մայրենի երկրում, հարազատ ժողովրդի ծոցում...

Ցաւակցութիւն չունեմ. իբրև պատմագիր, Դաշնակցութեան ճշգրիտ պատկերը տալու, բայց ես ուրբ. ազնեցի մի քանի բացառական կողմերը այդ կազմակերպութեան վերջին տարիների ընթացքից և յանձնարարում եմ հասարակութեան քննութեան առնել այստեղ յարուցած հարցերը։

Բ.

---

## ՀՆՉԱԿԵԱՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԴԵՐԻՒՏ

(Նամակ խմբագրութեան)

Ես ձեզ ասում եմ. լոյսը միշտ լաւ բան է. ինչ որ տարբեր է կապրի, կաճի և կը տայ պտուղներ տարի լոյսից, և ինչ որ մնայուն է կը մնայի, կը լուծվի և կը դառնայ ոչնչութիւն։

Հաղկական Հէքիաթից

---

«Աշխատանքի» № 33-ում մի յօդուած լոյս տեսաւ «Բայ Նամակ Նոր-Խօսքի» խմբագրութեան վերնագրով, որին, անկարող լինելով պատասխանել «Նոր-Խօսքի մէջ» նրա փակման պատճառով, խնդրում ենք թոյլ տալ պատասխանել «Մշակի» էջերում։

Այդ յօդուածը իր փոքրաթիւ տողերի մէջ պարունակում է տարբեր կեղծիքներ, զրպարտութիւններ ու անարժան ենթադրութիւններ, որոնց պատասխանելը չափազանց անտանելի ու ստորացուցիչ է մեզ համար, բայց միևնոյն ժամանակ անհրաժեշտ ու պարտադիր։

Մի ամիս առաջ, «Նոր-Խօսքի» № 5-ում, մենք մի յօդուած էինք տուել «Ո՞վքեր են հնչակեանները» վերնագրով, որի պատասխանն է հնչակեանների այդ բաց նամակը։ Մեր յօդուածի էական մասը, որ այնքան զայրացրել է հնչակեաններին, հետևեալն է.

«Թէ ովքեր են դաշնակցականները, այդ գիտէ արդէն հայ հասարակութիւնը։ Այն օրվանից, երբ նրանք քաղաքական զեկավարներ են դարձել իրենց խորհրդաւոր ներքնայարկերից և հրապարակ ելել իրենց խօսքը, հասարակութիւնն էլ հետաքրքրվեցավ նրանց հանդէպ և ասպէս թէ այնպէս դնահատելու նրանց։ Բայց հնչակեան կուսակցութիւնը մի զարմանալի յամառութեամբ ու հետևողականութեամբ փախչում է արևի լոյսից, մնում է փակված մութ նկուղներում։ Զարմանալի չէ, որ ամբողջ Ռուսաստանում չի գտնվի ոչ մի կուսակցութիւն, որ ներկայ պատմական օրերում հրապարակ դուրս եկած չը լինէր իր դատնանդով, իր ծրագրով, իր տակտիկայով, իր ուրիշ գործունէութեամբ։ Միմիայն հնչակեաններն են, կրկնում ենք, որ Զաքարիայի լռութիւն են պահպանում այդ բոլոր հարցերի նկատմամբ և շարունակում են մնալ լրջի հասարակութեան համար «խորհրդաւոր անծանօթներ»։ Եւ յօդուածը փերջացնում ենք հետևեալ տողերով. «Ժամանակ է, շատ վաղուց ժամանակ է, որ հնչակեան կուսակցութիւնը հրապարակ գայ, ասէ հասարակութեանը, ով է ինքը, և ապացուցէ, որ իրաւունք ունի գոյութիւն ունենալու»...

Եւ ահա այսօր հնչակեանները «հրապարակ են գալիս» «Աշխատանքի» մէջ։ Իրանց բաց նամակով։ Այդ նամակը չէ շօշափում գէրդաբար, մեր դրած հարցը բատ էութեան, այլ միայն, ինչպէս նկատում է նամակի հեղինակ պ. Փարամազը, պատասխանում է մեր յօդուածի «տեխնիքական մասին—հայհոյանքներին»։

Որոնք են այդ «հայհոյանքները»։ Ամենամեծ «հայհոյանքը» ըստ երևոյթին, այն է, որ մենք ասել ենք, թէ հնչակեանները «փախչում են արևի լոյսից, մնում են փակված մութ նկուղներում»... Որպիսի զարմանալի, ոգեղէն «փողոցային հայհոյանք»... Պ. Փարամազը չէ հասկանում ինչի մասին է խօսքը, կամ ձևանում է, թէ չէ հասկանում որպէսզի, պէտք է ենթադրել, առիթ ունենայ շարելու իր զրպարտութիւնները և հակադրելու այդպիսով մեր դէմ «սուրբ բնազդներին»,—որոնք նրա ասելով թերագրել են մեզ մեր յօդուածը,—իբր «զուտ» մարդ և «զուտ» ազնիւ բնազդներ։

Ընթերցողը հասկանում է, ի հարկէ, որ «մութ նկուղներ» բառերը, ինչպէս և «խորհրդաւոր ներքնայարկեր» բառերը Դաշնակցութեան վերաբերմամբ,—ռուսերէն темное подземелье, подполье,—մենք չէինք կարող գործածել երբեք իբրև հայհոյանք։ Սոցիալ-դեմօկրատիան ինքը գնա՛ չէ դուրս եկել ամբողջովին այդ «մութ նկուղների», իսկ վերջն ս, բէկերցիայի սարտիրների շորին հարկադրված է համարեա ամբողջովին նորից մտնել այդ «նկուղները»։ Պարզ է, որ հարցը «մութ նկուղների» մէջ չէ ամենևին։ Մենք արձանագրել ենք մեր յօդուածում մի բացարկի ու նշանակալից հանգամանք—այն, որ չը նայած հոկտեմբերեան «ազատութիւններին», որից յետոյ Ռուսաստանում գոյութիւն ունեցող բոլոր կուսակցութիւնները, արտակարգ փութկոտութեամբ ու ամենաբուռն եռանդով, առանց կանգ առնելու երբեմն մեծ զոհողութիւնների առաջ, օգտվեցին ստեղծված լիզալ հնարաւորութիւններից,—հնչակեան կուսակցութիւնը միակն է, որ ոչ մի վորձ չարաւ գտնէ մի փոքր լեգալիզացիայի ենթարկելու իր գործունէութիւնը՝ օգտվելու համեմատական ազատութիւնից։ Նա միակ կուսակցութիւնն է, որ չունեցաւ և չունի մինչև անգամ իր լիզալ օրգանը։ Սա, կրկնում ենք, մի բացառիկ և պերճախօս փաստ է, որ մենք արձանագրել ենք մեր յօդուածում—այն մասում, ուր յիշվում են «մութ նկուղներ» բառերը։ Բայց կարդացէք այն խղճով տողերը, որ պ. Փարամազը գրում է այդ առիթով։

«Ճշմարիտ է, որ մենք լոյսի մէջ չենք, նկուղներում ենք,—ասում է նա, բայց ասացէք խնդրեմ, ինչպէս կարողացաւ ձեր մտքով պարազանն Ն. Ժ.-ի այդ մութ նկուղները գտնել և նրա մէջ երկար ժամանակ մնալ»։ Դիտէք, ընթերցող, ինչ են ուզում ակնարկել այդ մութ ու անհեթեթ բառերով պ. հնչակեանները։ Դժուար է հաւատալ, բայց այդ այդպէս է։ Ցիշված ընկ. Ն. Ժ.-ին ոստիկանութիւնից հարձակելու ժամանակ, հնչակեանները ապատան, գիշերելու տեղ են տուել մի քանի անգամ հայկական ապատով թաղերում... Որքան տարդի պէտք է լինել յիշելու այդ բանը բանակոչի ժամանակ, որպէս յանդիմանութիւն, և որքան տխմար պէտք է լինել կարծելու, որ այդ դէպքից յետոյ օսցիալ-դէմօկրատիան իրաւունք չունի այլևս քննադատելու հնչակեան կուսակցութիւնը։ Տոդերիս գրողը, նման պրպագանդում, պատահմամբ ապատան է գտել մի ժամանակ, մօտ 2 շաբաթ շարունակ, Բաքուի «Եակօր» խուլիգանական ընկերութեան անդամներից մէկի մօտ։ Սա մի իրողութիւն է, որ հնչակեանները ցանկացած դէպքում կարող են ստուգել։ Հարցնում ենք պ. Փարամազից, զրկում է արդեօք այդ մեզ բարոյական կամ որևէ այլ տեսակի իրաւունքից քննադատելու «Եակօրի» «իսկական ռուս մարդկանց» գործունէութիւնը։ Կրկնում ենք, սրքան տարդի և տխմար պէտք է լինել այդպէս մատնելու, այդպէս դրելու համար։

Ցեսոյ, օգտվելով ասիթից, պ.-ը յիշատակում է, կարծես ցանկանալով միաժամանակ պարծենալ դրանով, որ մի քանի օսց.-դէմ. ընկերներ, երբեմն, գլխաւորապէս հայ-թուրքական կոտորածի ժամանակ գործնական տեսակցութիւններ են ունեցել իրանց հետ և նա՝ օգտվելով՝ բացականչում է. «Ինչո՞ւ այդ նկուղը օգտագործի (մթի՞) էիք լինել գործադուլների և ապատամբութեան ժամանակ, է Ծ-ին հանում էր Ս-ասը, սրան Շ-եանը, սրան էլ կիրակոսը, Իւանը, Շվիլին...» Այստեղ արդէն սկսվում է տերի շարքը։ Շ-եանը—այդ ի հարկէ այնքան էլ կարևոր չէ թէև—ոչ մի «գործադուլի ու ապատամբութեան» ժամանակ բանա չէ ունեցել այցելել և հնչակեան «սրբատեղիները», իսկ կիրակոսը, Իւանը և Շվիլին յիշվում են, պարզ է, միմիայն թող փչելու համար... Բայց դա, ինչպէս ասում են ռուսները,—только цветочки, а ягодки еще впереди!... Սրանից յետոյ գալիս են այնպիսի տեր ու կեղծիքներ, որ այդ փոքրիկ տերը միանգամայն ժուռվում են։

1) Օսց.-դեմօկրատիան հաւատարիմ իր սովորական տակտիկային — օգտվելու այն բոլոր զէպքերից, երբ նա այս կամ այն տարրերը, այս կամ այն կուսակցութիւնը կարող է առանձին դէպքերում ծառայեցնել իր յեղափոխական նպատակներին, Գիտական Թուռվայի ընտրութիւնների ժամանակ օգտվել է հնչակեանների ձայներից։ Պ. Փարամազը այդ ասիթով յայտարարում է, իբր թէ օսց. դէմ.«բլոկ է կազմել, եթէ չասեմ,—ուխտացնում է նա—միացել է հնչակեանների հետ անցեալ տարի և այս տարի»։ Իրողութիւնը այն է, ընթերցող, որ հնչակեանները առաջարկել են մեր կազմակերպութեանը բլոկ կազմել իրանց հետ, բայց օսց.-դեմ. Թիֆլիսի կոմիտէն վճռականապէս մերժել է նրանց այդ և ասել է, որ հնչակեաններից նա կարող է ընդունել միմիայն ծառայութիւններ, եթէ դրանք ցանկանում են, բայց բլոկ կազմել, որևէ տեսակն կապ հաստատել նրանց հետ՝ երբէք։ Հնչակեանները նեղացել են այդ ասիթով, բայց և այնպէս ընտրութիւններից մի քանի օր առաջ յայտնել են, որ իրանց ձայները կը տան մեր թեկնածուին, առանց որևէ բլոկի, առանց որևէ պայմանների։ Երբ պ. Փարամազը խօսում է «բլոկի» և «միասնության» մասին, նա բացարձակապէս ստում է։

2) Պ. Փարամազը յայտարարում է, որ օսցիալ-դեմօկրատիան էլ տերրորներ է արել, փող հաւաքելու նպատակով։ Ա մինչև անգամ խոստանում է «հարիւրներով թուել նրա այդ տեսակ գործերը»։ Դա մի սանձարձակ ստուտ է, մի անամօթ զրպարտութիւն պ. Փարամազի կողմից։ բայց նա այդքանով էլ չէ բաւականանում. նա ուզում է հաւատացնել ընթերցողներին, որ օսցիալ դեմօկրատիան հէնց իրանց, հնչակեանների հետ է կատարել այդ տեսակ տերրորներ և,—աւելացնում է նա,—նայելով մեզ—«այդ տերրորից ստացված փողով պահվել է ձեր թերթի գոյութիւնը»։ Այդքան ցինիզմ և այդքան անամօթութիւն մենք չէինք սպասի նոյն իսկ ամենատեսակ ոգեղէն զրպարտողի կողմից։ Ինչ վերաբերում է մեր թերթի «գոյութիւն պահելուն», դիտէք բանն ինչումն է, ընթերցող. երկու հնչակեաններ մեզ իբրև ժամանակաւոր պարտք 300 ռուբլի են տուել մի անգամ։ Դուք ասում էք, որ այդ տերրորի միջոցով հաւաքած փող է եղել. հաւատում ենք, բայց մենք որ և է մէկից, որ և է մի բարձրաստիճան փող վերցնելիս՝ իբրև պարտք թէ իբրև նոյն իսկ նպաստ, չենք հարցնում, թէ արդեօք այդ փողը «ալ դարդ», թէ «անարդար» ճանապարհով է ձեռք բերվել «Արդաբ» ճանապարհով ձեռք բերած փողերը առհասարակ, ինչպէս յայտնի է, շատ քիչ են լինում... Եւ այդ էլ մի հիմք է պ. Փարամազի կարծիքով, որ պէտք է արգելէր մեզ անպայման վատ կարծիք յայտնել հնչակեան կուսակցութեան մասին։ Մի անգամ էլ կանենք ձեզ, պ. Փարամազ. որքան տարդի և տխմար պէտք է լինել դիմելու համար բանական մեջ այդպիսի արգումենտներ։

Բայց դառնանք տերրորի խնդրին։ Մեր նպատակը չէ եղել տերրորի մասին յիշելիս, զատապարտել հնչ. կուս. այն պատճառով, որ նա դիմում է այդ միջոցին փող հաւաքելու նպատակով։ Այդ բանը իբրև, ասենք օրինակ՝ սիակ կամ իբրև ոչ ցանկալի, ներկայ պայմաններում ոչ նպատակայարմար միջոց՝ կարող են գործ դնել երբեմն և իսկական յեղափոխական կուսակցութիւնները։ Բայց այդ դէպքում զանազանութիւնը սկսում միջոցով տարբերվում է հնչակեան կուսակցութեան սկսում ազատագրական գաղափարի գործունէութիւն և հնարաւորութիւն տալիս հասարակութեանը և հէնց ձեզ ինքներդիր ճանաչելու ձեզ։ Շարունակեցէք պարոններ, մենք կապացուցանենք և այժմեանից արդէն ձեր օգնութեամբ, որ հնչակեան կուսակցութիւնը ոչ մի քաղաքական գաւառանք, ոչ մի գաղափարական գործունէութիւն և հետևապէս ոչ մի գոյութեան իրաւունք չունի, որ նա մի քաղաքական դիտակ է, որը կենդանացնելու հնարաւորութիւն չը կայ այլևս և որը պէտք է վերացվի հրապարակից։

Մենք կապացուցինք այդ, կրկնում ենք, այժմեանից արդէն ձեր անմիջական օգնութեամբ և աջակցութեամբ...

Շարունակեցէք։

«Նոր-Խօսքի» խմբագրութիւն

Ց. Գ.—Յօդուածը վերջացրել էինք երբ «Մշակի» կիրակնօրեայ № -ում կարդացինք պ. Artemios-ի բաց նամակը «Նոր-Խօսքին»։ Գաղափար նոյնութեամբ, ուղղակի նոյն բառերով, կրկնում է պ. Փարամազի տարը։ Այդ երկու պարոնները ներշնչված են, ըստ երևոյթին, միևնոյն աղբիւրից, միևնոյն մարդկանցից կամ մարմնից, որոնք քաջութիւն չունեն անմիջապէս հրապարակ գալու և թաքնվում են խեղճ պ.-պ. Փարամազի ու Artemios-ի ետևը։ Բայց լաւ չէք կատարում ձեր ինապերացիան, ձեր ներշնչումները, թաքնվող պարոններ։ Միևնոյն բառերով չէ կարելի խօսել մի քանի մարդու հետ. պէտք է մի փոքր աւելի հեռատես լինել։

Պ Artemios-ը շատ է պար գալիս «նախկին հնչակեաններին» անունների շուրջը, նա էլ կրկնում է այն սուտը, իբր թէ «Նոր-Խօսքի խմբագրութիւնը բաղկացած է հին հնչակեաններից։ Երևի պ. կարծում է, որ հնչակեան լինելը, մինչև անգամ «նախկին» մակդիրով այնքան վատ բան է, որ հթէ հասարակութիւնը հաւատայ այդ բանին, դրանով կարելի է արդէն վարկաբեկ անել «Նոր-Խօսքին»...

Պ. Artemios, որ հնչակեանները դատում են օսցիալ-դեմօկրատ, դա դժուանալի չէ, դա բնական, շատ հասկանալի և արդէն սովորական դարձած բան է։ բայց որ յանձին ձեզ գտնվել է մի հատ «օսցիալ-դեմօկրատ», որը մի քանի տարի օսցիալ-դեմօկրատ կոչվելուց յետոյ դարձել է հնչակեան և այն էլ այդ տեսակ կատաղի ու անձնուրաց հնչակեան,—այդ իսկապէս որ զարմանալի է և շատ ընորոշ ձեր թէ քաղաքական և թէ բարոյական ֆիզիօնոմիայի համար... Եւ ձեզ նման մարդկի համարձակութիւն ունեն հրապարակ գալու մամուլի մէջ և «քննադատելու» օսցիալ-դեմօկրատիային։

Պ. Artemios-ը չէ բաւականանում պատասխանելով մեր յօդուածի «տեխնիքական մասին—հայհոյանքներին»։ Նա պատասխանում է մեր հարցերին և «ըստ էութեան»։ Մենք հարցնում էինք. ինչու՞ է հնչակեան կուսակցութիւնը փախչում արևի լոյսից, ինչու՞ հրապարակ չէ գալիս «Մի բան սակայն լաւ իմացէք,—պատասխանում է պ. Artemios-ը,—որ մենք ձեզ նման ապուշներ չենք, որ իրերի ներկայ զրութեան և ընկեցիայի թագաւորութեան մասնակցելու մեր գաղտնիքները կատաղարութեան առաջ...» Կանգ առէք այս խօսքերի վրա և մտածեցէք, թէ ինչ սոսկալի ցինիզմ, ինչ անորակելի անամօթութիւն են պարունակում նրանք իրանց մէջ։

Օսցիալիստ-յեղափոխականների, օսցիալ-դեմօկրատների և այլ բոլոր յեղափոխական կուսակցութիւնների հարիւրաւոր թերթերի խմբագրութիւնները բաղկացած են եղել տասուշներից», որոնք «բացելիս են եղել կառավարութեան առաջ իրանց գաղտնիքները»։ Ռուսաստանի մեծ յեղափոխութեան այն հոյակապ լեգալ օրգանները, որոնք պէտք է գրաւեն համաշխարհային պատմութեան լաւագոյն էջերը—բանւորական պատգամաւորների խորհուրդները, երկաթուղային ծառայողների, պոստային ծառայողների և այն և այն լեգալ «սօյուզները», որ գոյութիւն ունէին ընկերցիայի ամենակատաղի սարսափների ժամանակ, բաղկացած են եղել բոլոր «տասուշներից», որոնք «բացելիս են եղել կառավարութեան առաջ իրանց գաղտնիքները»...

Խօսք չենք գտնում պատասխանելու, բայց մի բան միայն կասենք. այդպիսի զարհուրելի անամօթութիւն, այդպիսի յանցաւոր սըբապղծութիւն կարող են թոյլ տալ իրանց միմիայն Artemios-ի նման վարձկան գանգատները։

Նոյնը

---

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 7 օգոստոսի

Ներկայ նամակի պատճէնը ուղարկված է «Երկիր» խմբագրութեան։

«Երկիրը» իր ծնած օրից պրովոկատորական տիպմի մէջ է թատալվում, այնպէս որ Վեկիլիչն իր արքանեակներով կամաց-կամաց նսեմանում են «Երկրում» բոյն դրած մեր «պատրիոտների» առաջ։ Ով ուշի ուշով կարդացել է «Երկիր» համարները, թող քննէ, վերլուծէ այն յաճախ կրկնվող բառերը, որ կոչվում են հատարակական դասասան։ Բոլորին պարզ է, որ այդ դասասանն էր յանձնված մեր անմոռանալի ընկեր Շեալին. և ինչպէս տեսնում էք, հայ-Վեկիլիչների օրդանը յանդուգն համաձայնութիւնը դեռ շարունակում է հասարակական դատաստանից նորանոր զոհեր պահանջել։ Մենք յուսով ենք, որ արդիւնքը գոհացուցիչ կը լինի և մեր «պատրիոտների» վոմանը կը ճաշակէ իր ցանած սերմերի քաղցր պտուղները։

Եւ ա՛յդ, խղճով հերստատաներ, երբէք մեր մուքը խմբագրատուն համարում էք «վանդալական»։ Մենք ընդամենը վեց հոգի էինք. ներեցէք, որ համաձայնութիւն չունենանք մենակ գալու. այդ ձեզ յայտնի է թէ ինչու... Այնուհետև քաղաքավարի կերպով մենք ձեզ առաջարկեցինք, որ անձամբ ծանոթանայիք մեր կազմած փաստաթղթի աբանագրութիւնների հետ և թոյլ չը տայիք ձեզ՝ անարդարացօրէն ծռմռել այն տեղերը, որ կատարվել է յանձին Շեալու, և այդպիսով դուք չը հակասէիք բուն ճշմարտութեանը, որով մոլորեցնում էք հասարակական կարծիքը։

Պ. պ. «պատրիոտներ», ահա այն ամենը, որ դուք ներկայացրել էք ձեր ընթերցող հասարակութեան և ձեր փայփայած «հասարակական դատաստանին»։ Բայց միևնոյն ժամանակ մի մոռանաք հասարակական այն իսկական դատաստանը, որի առաջ դրված են Շեալին և Վեկիլիչին յատուկ ձեր զրուելի պրովոկացիան։ Այստեղ՝ որքան կամենաք ակնարկեցէք ձեր «հասարակական դատաստանը»։ վերջը, անշուշտ, ձեզ համար շատ բարի վախճան է ունենալու, նմանապէս և հասարակութեան համար։

Միհրան

---

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այսօր, հոկտեմբերի 8-ին, առաւօտեան ժամը 11-ին Դպիրանեան դպրոցի դահլիճում (Պասկեվիչա փող. 13) կը կայանայ հայուհեաց որբանոցի ընկերութեան ընդհանուր ժողովը, որի զրաղմունքները կը լինեն՝ հաշուետուութիւն ընկերութեան հիմնադրուհիների կողմից և ընտրութիւններ վարչական ամբողջ կազմի։

---

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի առաջնորդարանի այն սենեակը, որ գնում է դէպի կուր գետը, հոկտեմբերի լոյս 7-ի գիշերը ենթարկվել է կողոպուտի. գողերը անցել են կուրի ափից և տարել են անկողիններ և երկու զոդ։ Նրանք օգտվել են Գոպկալի պաշտպանից և կողոպտել են այդ տան խոնաոցը, առնելով ինքնահա և ուրիշ իրեր։ Կասկածվել են երկու զէօրնիներներ։

---

Այսօր, հոկտեմբերի 8-ին, աքսորվում է Արքանգելսկի նահանգը, մինչև զինուորական գրութեան վերանալը, «Նոր Խօսքի» խմբագիր Աշոտ Խումարեանը։

---

Թիֆլիսի նահանգապետը թոյլատրել է տնային վարժուհի Ֆ. Ս. Վարդանեանին հրատարակել Թիֆլիսում մի ամենօրեայ հայերէն լրագիր «Պայքար» անունով։

---

Ստացանք Իրբից Ժուլավսկու «Миртовый Вѣнокъ» գրքոյկը, պէտաս 4 գործողութեամբ, թարգմանութիւն Նատ. Բուդկեվիչի. գինն է 30 կոպէկ։

---

Հոկտեմբերի 6-ին, պատրաստի հագուստեղէն վաճառող Թառայեանը յայտնել է ոստիկանութեանը, որ Զօրենցովի հրապարակի և Միքայէլեան փողոցի անկիւնում գտնվող նրա պատրաստի հագուստեղէնի մագազինի կողքին գտնվող խանութի կուրից մտել են անյայտ չարագործներ և գողացել 4733 ռուբ. 12 կոպ. հագուստեղէն։ Երբ է կատարվել գողութիւնը, դժուար է պարզել, որովհետև մագազինը գեն.-Նահանգապետի կարգադրութեամբ սեպտեմբերի 21-ից կնքված է։

---

Այսօր, գերեկվայ ժամը 12-ին, կը կայանայ 4-րդ արական գիմնազիայի (Կոնդրեվսկի փող.) ծնողական ժողովը՝ իւրաքանչիւր դասարանի համար առանձին պատգամաւորներ ընտրելու վերաբերեալ։

---

Հոկտ. 6-ին, գերեկվայ ժամը 4-ին, կայացել է երկաթգործարի ծառայողների, վարչութեան և քաղաքի ներկայացուցիչների միացեալ խորհրդակցութիւնը՝ երկաթգործարի երթևեկութիւնը կանոնաւորելու հարցի ասիթով։ ծառայողները կամք են յայտնել ընդ առաջ երթալ վարչութեան և քաղաքի ներկա-

յացուցիչների ցանկութեան և հասարակութեան համար անել բոլոր իրանցից կախված յարմարութիւնները։ Նրանք իրանց միջից ընտրում են մի մասնաժողով, որը պէտք է նախապէս միջոցներ մշակէ եկեքտրաքարշի երթևեկութեան կարգը կանոնաւորելու համար։ Ապա այդ միջոցները կը յանձնվին ընկերների ընդհանուր ժողովին ի հաստատութիւն։

—

Հոկտեմբերի 6-ին, երեկոյեան 7 ժամին, Նովո-Արսենալի փողոցում անյայտ չարագործներ ատրճանակի 2 հարուածով վիրաւորել են տեղացի Բագրատ Մնացականեանին։

—

Հոկտեմբերի 6-ին, ցերեկվայ մօտ ժամը 3 ին, ոստիկանութիւնը զօրքի հետ միասին խուզարկիլով Դօլուխանեանի և Նադիրեանի Կուկիայի պրավոսլաւնի գերեզմանատան մօտ գտնվող կալուածքը, երևան են հանել մի բլրակ, որը փորելիս գտնվել է մի փայտէ արկղ։ Խուսափելով, մի գուցէ անզգուշութիւնից պայթիւն առաջանայ, յիշեալ արկղի վրա 26 անգամ կրակել են, բայց ոչ մի պայթիւն տեղի չէ ունեցել. արկղը բաց են արել և գտել են Ջուալում խնամքով փաթաթած 4 ռումբ։

—

Ախալցխայից մեզ հաղորդում են, որ սեպտ. 27-ի գիշերվայ ժամը 1-ի մօտերը մի քանի հեծեալ անյայտ անձինք, սարշաւ անցնելով Նիկոլաէվսկի փողոցով, 10 անգամ անօգուտ կրակ են պարպել «Европейск. ном.» հիւրանոցի պատուհանների վրա։ Դրանց յետոյ գնդակ արձակողները բաժանվելով ըստերևոյթին երկու խմբի, մի մասը ուղղվել է Ախալցխայի խճուղու կողմը, միւս մասը—Արատեումանի ճանապարհով անցնելու ժամանակ դէպի օդը արձակում է դարձեալ 20 անգամ, որից յետոյ արագութեամբ անյայտացել է։ Արձակողների անձնաւորութիւնները չէ պարզված։

—

Ինչպէս մեզ հաղորդում են, Բագում սպանված է անիշխանականների պարագլուխ Ահրիմանը (Սարգիս Քալաշեանը)։ Մարդասպանը ազատ է։

—

Հոկտեմբերի 1-ին, երեկոյեան ժամի 7-ին, Սենակի գաւառի «Մարսելի» կոչված տեղում, ճանապարհի վրա վեց հոգի զինված անյայտ չարագործներ կողոպտել են Զուզդիղի գաւառի Զօգա գիւղի բնակիչներ Սամսոն և Դաթա Շենգելիձներին և Նիկո Բերիային, ուրոնցից խլել են 307 ռուբլի փող և զանազան իրեղէններ 45 ռուբլու արժողութեամբ, որից յետոյ յանցաւորները անյայտանում են։

—

Ախալքալաքի գաւառից հաղորդում են, որ անցեալ սեպտեմբերի 23-ի առաւօտեան Գօրու գաւառի Ղզլ-Բիլիսա գիւղից Ախալքալաքի գաւառի Բալանալու գիւղերն եկել 16-17 հոգի անյայտ ձիաւորներ, «Գրիչա Ծերեթելի» հրամանատարութեան տակ, որոնք իրանց անուանում էին կարմիր-հարիւրեակայիններ։ Այդ աւազակախմբի մէջ եղել են վրացիներ, օսեփներ և մի երկու հոգի էլ ռուսներ։ Նրանք զինված էին բերդանոցներով և եռափեան հրացաններով։ Այդտեղ նրանք հանդիպում են Բալալեթի տանուտէրի սուրհանդակ Գիքօ Գալարամաձին և խլում են նրանից 29 հատ պատրաստի փամփուշտներ։ Նրանք գիւղում խլում են Սելիվանենկոի ձին իր թամբով, պտտական հրացանը 30 փամփուշտներով և համոզում են նրան, որ թողնի ծառայութիւնը և միանայ իրանց, միևնոյն ժամանակ անուանարկեցին Թագաւոր Կայսրի անձը, որից յետոյ կողոպտիչները մտան տեղացի Սօլոմոն Զեզգինիձէի տունը, որտեղ ճաշելով, շարունակեցին ճանապարհը դէպի Մատեգա գիւղը, ապա այնտեղից էլ անցան Բակուրիանի։ Արքունական անտառապահ Պաւել Դիաամիձէն, որի մասին բանտեսնողները ասում էին, որ նա եղել է այդ աւազակախմբի մէջ, վկայել է, որ այդ աւազակախմբը սեպտեմբերի 23-ի գիշերը գիշերել է յիշեալ Ղզլ-Բիլի գիւղում, որտեղ բռնելով իրան տարել են իրանց հետ Բալանու գիւղը իբրև ճանապարհ ցոյց տուող։ Առաւօտեան, մօտաւորապէս ժամի 9-ին, կրկին վերցրին իրան ու տարան հեռները Բակուրիանի ճանապարհը ցոյց տալու համար, որը և նա կատարեց, որից յետոյ միայն աւազակները նրան արձակեցին։ Կողոպտիչների եռանդուն կերպով հետամտում են։

—

Շօրապանի գաւառից հաղորդում են, որ երեկոյեան Շօրապանի գաւառի Օրտօլի գիւղում անյայտ չարագործներ յարձակվելով Զօկելիձէ գիւղացու տան վրա, հրացանից երկու գնդակ արձակեցին, ոչ մի վնաս չը պատճառելով։ Յարձակման ենթարկվողը կասկած է յայտնում համագիւղացի Տեդրօի և Իվան Դեւիձէների և Իվան Բարբակիձէի վրա։ Այս կասկածը հաստատվում է այն հանգամանքով, որ սպանութեան փորձի հետեւեալ օրը Տեդրօ Դեւիդձէն կնոջ հետ գալիս է Զօկելիդձէի մօտ ներողութիւն խնդրելու, և խնդրում է իրանց դէմ գործ չը բանալ։ Մեղադրեալները բանտարկված են։

—

Սեպտեմբերի 26-ին, ցերեկվայ ժամի 2-ին, Սէնքի գաւառի Սախաբէդիօ գիւղի մօտ ատրճանակով սպանվեց Զուզդիդի գաւառի Զակվինջի գիւղի բնակիչ Երմիլ Կվաւխաւան մանրավաճառ Գիւասալիայի ձեռքով, որ յարձակվել էր նրա վրա կողոպտելու նպատակով։

—

Անցեալ սեպտեմբերի 28-ի գիշերը, Քութայիսի գաւառի Շրօմա գիւղում տաս անյայտ չարագործներ յարձակում են գործում գիւղացի Ամազասպ Սամխարադէի տան վրա և մահվան սպառնալիք տալով կողոպում են նրանից 480 ռուբլի։ Կողոպտու